ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
No 64 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 0020 ք. Երևան, Վարդաշեն 3փ 2շ. հեռ. (+37410)453-331, էլ. փոստ
school64@schools.am

N57

21/08/2023թ.

ՀՀ ԿԳՄՍ գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանին

Հ.64 հիմնական դպրոցի տնօրեն՝ Ե. Հարությունյանից

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Երևանի հ.64 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում առկա է՝ <<Մաթեմատիկա>> (10 ժամ), <<Ռուսաց լեզու>> (16 ժամ), <<Դասվար>> (13 ժամ), առարկաների ուսուցչի թափուր տեղ:

Մրցույթի մասին հայտարարությունը կհրապարակվի դպրոցի կայքէջում և առցանց հարթակում 23.08.2023թ-ին:

Խնդրում ենք հայտարարության տեքստը տեղադրել ԿԳՄՍ նախարարության կայքում 23.08.2023թ-ին:

Կից ներկայացնում ենք հայտարարության տեքստը:

21/08/23

X

ԵՐԱՆՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տնօրեն՝ /Ե.

Հարությունյան/

Կատարող՝ Ե. Պողոսյան

Հեռ. (010)453-331

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ <<Երևանի հ.64 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Մաթեմատիկա>> (10 ժամ), <<Ռուսաց լեզու>> (16 ժամ), <<Դասվար>> (13 ժամ), առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. օգոստոսի 23–ից մինչև 2023թ սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ սեպտեմբերի 8 –ին՝ ժամը 13:30-ին, Երևանի հ.64 հիմնական դպրոցում, հասցեն՝ Ք. Երևան, Վարդաշեն 3փ. 2շ.:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 45-33-31 հեռախոսահամարով:

Signed by HARUTYUNYAN YERANUHI
7110650022
Հավաստված է ՊԿԵՆԸ-ի կողմից